«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ ***Պրոբլեմային ուսուցման մեթոդաբանությունը և կիրառումը առարկայի դասավանդման գործընթացում***
/ներառական կրթության իրականացման առանձնահատկությունները և առկա դժվարությունները/

Առարկան՝ ***Հայոց լեզու և գրականություն***

Հետազոտող ուսուցիչ՝ ***Արմինե Գասպարյան***

Ուսումնական հաստատություն՝ ***Աշտարակի՝ Ն.Աշտարակեցու անվան հմ 1 հիմնական դպրոց***

Երևան 2023

Ներածություն

Որպես կրթական բարեփոխումների մի մաս՝ 2000-ականների սկզբին ներառական կրթությունը (ՆԿ) ճանաչվեց ՀՀ կառավարության համար առաջնահերթ խնդիր: 2005 թ. ՀՀ կառավարությունն ընդունեց կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին օրենքը և ներառական կրթությունը մտավ 2008-2015 թթ.-ի կրթության զարգացման պետական ծրագրի մեջ: Այնուամենայնիվ, Խորհրդային Միությունից ժառանգված կրթական երկակի համակարգից անցումը ամբողջովին իրականացված չէ, և հաշմանդամություն ունեցող երեխաները առավել հաճախ կրթություն են ստանում առանձնացված միջավայրում, ինչպես օրինակ՝ հատուկ դպրոցներում: Այնուամենայնիվ, նախաձեռնությունների մանրակրկիտ ուսումնասիրությունները ցույց տվեցին առկա կրթական ծրագրերի թույլ կողմերը: Հատուկ դպրոցներում երեխաների թիվը զգալիորեն չի նվազել: 2001 թվականին UNICEF-ի կողմից անցկացված հետազոտությունը ցույց է տալիս, որ մանկատներում բնակվող հաշմանդամություն ունեցող երեխաների 70%-ն ընդհանրապես չի գնում դպրոց, և հատուկ կրթական կարիքներ ունեցող երեխաների ծնողների միայն 19%-ն է նշել իրենց երեխաների համար կրթական անբավարար պայմանները և ցածր մակարդակը՝ որպես հիմնական պատճառներ հանրակրթական դպրոցներից դուրս մնալու համար:

Դեպի համընդհանուր ներառում

Հանրակրթական դպրոցներին ներառական դպրոցի կարգավիճակ շնորհելու գործընթացը 2012թ.-ին ՀՀ ԿԳՆ հանդես եկավ մի նախաձեռնությամբ, որի համաձայն շրջանառությունից պետք է հանել ԿԱՊԿՈՒ անձանց կրթության մասին օրենքը և այն ներառել հանրակրթության օրենքի մեջ՝ բոլոր հնարավոր տարբերակված մոտեցումներից խուսափելու համար: Իսկ դա նշանակում է, որ այլևս գոյություն չեն ունենալու ՆԴ և ոչ ՆԴ-ներ, այլ խոսքը գնալու է համընդհանուր ներառականության մասին՝ այսինքն՝ ՀՀ-ում գործող բոլոր հանրակրթական դպրոցներն ինքնըստինքյան պետք է դառնան ներառական, իսկ հանրակրթական և ներառական ծրագրերը պետք է համադրված լինեն՝ ունենալով իրենց համապատասխան արտահայտումը նաև ԱՈՒՊ-երում:

Այս նախաձեռնությունը բավականին ռիսկային է: Պետք է ճշգրիտ հաշվարկված լինեն պետական բյուջետային ներդրումները և ըստ այդմ՝ ՆԴ- երի ավելացման դինամիկան: ԿԳՆ նախարարի հայտարարության համաձայն մինչև 2025թ. ՀՀ-ում գործող բոլոր հանրակրթական դպրոցները պետք է իրենց դռները բացեն ԿԱՊԿՈՒ երեխաների առջև: Ծրագրում կոչ է արվում ստեղծել ներառական կրթության հնարավորություններ բոլոր հանրակրթական դպրոցներում:

ՀՀ-ում ներառական կրթության փաստացի իրականացման 16 տարիների ընթացքում ՆԿ ծրագիրը մի դպրոցի կողմից սկզբնավորված նախաձեռնությունից զարգացել է մինչև համընդհանուր ներառականության հավակնություններ ունեցող օրենսդրական նախագիծ: Այս 16 տարիների ընթացքում արձանագրվել են մի շարք ձեռքբերումներ, նվաճումներ, խնդիրներ և մարտահրավերներ, որոնց մի մասը քննարկվել և իր անդրադարձն է գտել հանրակրթությունում.

Ներառական կրթության իրականացումը դպրոցներում

Հանրակրթական դպրոցներին ներառական դպրոցի կարգավիճակ շնորհելու գործընթացը Հանրակրթական դպրոցներին ՆԴ-ի կարգավիճակ շնորհելու գործընթացը բաղկացած է մի քանի փուլից: Նախ, դպրոցը պետք դիմում ներկայացնի տարածքային կառավարման մարմին, որում ամրագրվում է ներառական կարգավիճակ ստանալու դպրոցի հիմնավորումը: Իբրև հիմնավորման փաստաթուղթ ներկայացվում է ԲՀՄԳ կենտրոնի կողմից աշակերտների կարիքների գնահատման արդյունքների փաթեթը: Ներկայացված փաստաթղթերը քննարկվում են կրթության պետական լիազոր մարմինների կողմից: Դպրոցին ներառականի կարգավիճակ շնորհելու ԿԳՆ որոշումից հետո դպրոցի անձնակազմը, ըստ տնօրենի կողմից ներկայացված ցուցակի, անցնում է Կրթության ազգային ինստիտուտի /ԿԱԻ/ կողմից վերապատրաստումներ: Վերջին փուլում դպրոցը ստանում է ավելացված չափաքակով /տիպային/ ֆինանսավորում:

Ներառական կրթության զարգացումը մանր քայլի մեթոդով որոշ երկրներում հիմնախնդիրը հատկապես սրված է հանրակրթության համակարգի բացակայության և / կամ համակարգում ղեկավարության և հենց համակարգի միջև համախմբվածության բացակայության հետևանքով: Նմանօրինակ իրավիճակներում մեծ մասշտաբի փոփոխությունները անհնարին են, և ներառական կրթության զարգացման սկզբնական փուլերում մանր քայլերով առաջխաղացումը վճռող է հանդիսանում:

Եվ իսկապես, մանր քայլի քաղաքականությունը կարող է անհրաժեշտ փուլ լինել բոլոր պետական ձեռնարկումներում՝ դառնալով կրթության ընդարձակ համակարգում փոփոխությանների գործընթացի և ներառական պրակտիկայի զարգացման կատալիզատոր՝ այսինքն մեկնարկ տալ նրան՝ չսպասելով պետական մակարդակով քաղաքականության փոփոխությունների:

Միշտ էլ հանդիպում են ներառական պրակտիկան սատարող դպրոցների և ուսուցիչների օրինակներ, կամ էլ ներառական դպրոցների զարգացմանը ձգտող համայնքների օրինակներ: Նման առանձին օրինակները պետք է ըստ ամենայնի խրախուսվեն մասնագետների հովանավորման և լրացուցիչ ֆինանսավորման միջոցով, հատկապես, եթե նրանք գործում են գործող օրենսդրության սահմաններում:

Ժամանակի ընթացքում նրանք կարող են դառնալ ցուցադրական նախագծեր, որոնցից կարող է օրինակ քաղել ողջ երկիրը: Այդպիսի տեղական ծրագրերում կարող են և այլ շահախնդիր մարդկանց խմբեր, որպիսիք են ուսուցիչներ հրահանգիչները, այլ գործակալություններից մասնագետները և այլն: Նման ծրագրերում հաջողության գործոններ հանդիսանում են հետևյալները.

Աշխատանք այն դպրոցների և շրջանների հետ, որտեղ հավանականություն կա հասնելու հաջողության (օրինակ՝ համապատասխան աջակցությունը, համանման աշխատանքի ունեցած փորձը, լավ պատրաստված և տրամադրված կադրերը):

Աշխատանք տվյալ պահին արդեն լավ համբավ ունեցող դպրոցների և տնօրենների հետ, որպեսզի տպավորություն չմնա, որ ներառումը աշխատանքի այլ ոլորտներում արդյունքի չհասած դպրոցի ընտրություն է:

Դպրոցներին, որտեղ իրականացվում է ծրագիրը, աջակցություն աշխատանքի եղած փորձով և ռեսուրսներով:

Գործողությունների «լայն ծավալված ռազմավարություն, որը կտեղեկացնի տվյալ նախաձեռնությունը այլ դպրոցների Մանկավարժամասնագիտական ռեսուրսների ապահովվում, բազմամասնագիտական թիմեր և առարկայական ուսուցիչներ:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատում և ԱՈՒՊ-ներ

ՆԿ կազմակերպման կարևորագույն օղակը բազմամասնագիտական թիմն է, որը պատասխանատու է անհատական ուսումնական պլանների կազմման, երեխաների հետ ընթացիկ ամենօրյա աշխատանքների իրականացման, առաջընթացի ապահովման, ԿԱՊԿՈՒ երեխաների ծնողների և առարկայական ուսուցիչների հետ արդյունավետ համագործակցային հարաբերությունների ստեղծման համար: Դպրոցներին նյութատեխնիկական բազան համալրելու հարցում աջակցություն են ցուցաբերում ԲՀՄ գնահատման կենտրոնը, որը տրամադրում է մեթոդաբանական ձեռնարկներ, տարբեր միջազգային և հասարակական կազմակերպություններ, որոնք հիմնականում օգնում են դպրոցներին ձեռք բերել ժամանակակից դիդակտիկ նյութեր և պարագաներ:

Կրթության պետական ծրագիրը սահմանում է, որ թիմում պետք է ներգրավված լինեն երեխայի կրթության համար շահագրգիռ տարբեր մասնագետներ (ընդհանուր կրթության մանկավարժ, հատուկ կրթության մանկավարժ հոգեբան, լոգոպեդ) և թիմի համակարգողը: Որևէ պաշտոնական փաստաթուղթ չի սահմանում յուրաքանչյուր մասնագետի աշխատանքի նկարագրությունը կամ առնվազն պարտականությունների սահմանումը:

Թիմը գնահատում է յուրաքանչյուր երեխայի կրթական կարիքները, հայտնաբերում է նրա առողջապահական և սոցիալական այն կարիքները, որոնք կարող են ուղղակի ազդեցություն ունենալ երեխայի կրթության վրա: Մշակվում է երեխայի անհատական ուսուցման պլան՝ ուղղված կարիքի բավարարմանը: Այսպիսի մոտեցումը հնարավորություն է տալիս կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխայի կրթությունը կազմակերպել հանրակրթական ընդհանուր դպրոցում՝ անհատական ուսուցման պլանով, իսկ անհրաժեշտության դեպքում՝ հատուկ ծրագրերով:

Անհատական ուսուցման պլանը (ԱՈՒՊ-ը) ուղեցույց է կամ միջոց ուսուցիչների, դաստիարակների, երեխաների հետ աշխատող մասնագետների, ծնողների

համար: Այն օգնում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների անհատական ուսուցումը հանրակրթական դպրոցներում արդյունավետ կազմակերպելուն և նրանով հատուկ կարիքները բավարարելուն. ներառական դպրոցների ֆիզիկական հարմարեցվածություն, նյութատեխնիկական և մեթոդական ռեսուրսներ:

ԱՈՒՊ-երը կազմվում են օրենքի համաձայն՝ հատուկ մանկավարժի, սոցիալական մանկավարժի, ուսուցչի, ինչպես նաև ծնողի մասնակցությամբ: Յուրաքանչյուր ուսուցիչ ունի իր առարկայի համար հատկացված բաժինը, որտեղ նշումներ է կատարվում երեխայիներկայիս վիճակի, դրված նպատակի, գործողությունների պլանի և առաջադիմության մասին: Բացի այդ, նշումներ են կատարում նաև հոգեբանը, հատուկ մանկավարժը, լոգոպեդը, և այլն:

Ինչպես վկայում են հետազոտության արդյունքները՝ գործնականում ԱՈՒՊ-երի որպես այդպիսիների և դրանց կազմման գործընթացների շուրջ գոյություն ունեն մի շարք հակադիր մոտեցումներ և կարծիքներ՝ բազմամասնագիտական թիմի անդամների և ՆԴ տնօրենների մոտ:

Մի շարք հատուկ մանկավարժներ դժգոհում են ԱՈՒՊ-երի ձևաթղթային սահմանափակումներից: Մասնավորապես այն հնարավորություն չի տալիս նշումներ կատարել ոչ միայն հիմնական խնդիրների, այլև ենթախնդիրների վերաբերյալ՝ պատճառահետևայնքային կապերի բացահայտման և երեխայի հետ աշխատանքն առավել արդյունավետ կազմակերպելու համար:

Մանկավարժների մյուս խումբը՝ հակառակը, համոզված է, որ ԱՈՒՊ-ը իբրև փաստաթուղթ բավականին հագեցած է ավելորդ տեղեկատվությամբ և ենթաբաժիններով, ինչի արդյունքում մի շարք ուսուցիչներ ուղղակի ժամանակ չեն ունենում պատշաճ կերպով լրացնել իրենց հատկացվող բաժինները:

...ԱՈՒՊ կազմելն ուղղակի թղթավարություն է, ճիշտ է դրանով աշխատում են երեխայի հետ, բայց այն շատ ժամանակ է տանում: Օրեր ու շաբաթներ այս պլանի վրա գլուխ կոտրելու փոխարեն կարելի է ամեն երեխայի համար տարբեր կետերով կազմել նրա հետ աշխատելու պլանը և առաջնորվել դրանով...Այդ պլանի վրա

այդքան ծախսած ժամանակը կարելի է օգտագործել երեխայի հետ աշխատելու վրա հատված հատուկ ԱՈՒՊ-ը կազմվում է դիտման և գնահատման աղյունքների և եզրահանգումների հիման վրա: ԱՈՒՊ-ը կազմում է բազմամասնագիտական խումբը:

Ներառական դպրոցների ֆիզիկական հարմարվեցվածություն, նյութատեխնիկական և մեթոդական ռեսուրսները

Ֆիզիկական հարմարեցվածությունը բաղկացած է հետևյալ չափանիշներից.

1. Թեքահարթակների առկայություն-արտաշենքային և շենքի ներսում: (Ուսումնասիրված ՆԴ-երից 32-ը ունեն մուտքային թեքահարթակներ, իսկ մյուս երկուսում վերջիններիս բացակայությունը բացատրվում մի դեպքում հենաշարժողական խնդիրներ ունեցող աշակերտների բացակայությամբ, մյուս դեպքում՝ միայն մեկ աշակերտի առկայությամբ, ով ինքը հրաժարվում է սայլակով գալ դպրոց): ԿԱՊԿՈՒ երեխաների կրթությունը կազմակերպել միայն շենքի առաջին հարկում: Սակայն այս մոտեցումը չի գործում միջին և ավագ դպրոցի պարագայում, որտեղ առկա են կաբինետային դասարաններ՝ տեղակայված երկրորդ հարկերում: ԿԱՊԿՈՒ երեխաների դասընկերները ստիպված են նրանց ձեռքերի վրա տեղափոխել երկրորդ հարկ: Հենաշարժական խնդիրներ ունեցող երեխայի համար սա բավականին վտանգավոր քայլ է և կարող է լուրջ վնաս հասցնել երեխայի առողջությանը: Այլ դեպքերում երեխաներն ուղղակի չեն մասնակցում պրակտիկ-լաբորատոր աշխատանքներին՝ դուրս մնալով կրթության որակի կարևորագույն բաղկացուցիչ կազմող գործնական աշխատանքներից:

2. Սանհանգույցների հարմարեցվածություն:

3. Սննդի կազմակերպման վայրի առկայություն:

4. Սպորտդահլիճի հարմարեցվածություն: (Որևէ դպրոց չունի հարմարեցված սպորտային դահլիճ, առավել ևս մասնագետ-ուսուցիչ, ով կարող է պարապել ֆիզիկական խնդիրներ ունեցող երեխաների հետ):

5. Դասասենյակների հարմարեցվածություն. համապատասխան սեղան-աթոռների, լայն փեղկով դռների առկայություն և այլն:(Առանձնահատուկ դասասենյակային հարմարեցվածությամբ ևս որևէ դպրոց աչքի չի ընկնում: Սա բավականին ծախսատար խնդիր է, որը այսօր որևէ դպրոց սեփական միջոցներով չի կարող ապահովել: Դասընթացները կազմակեպվում են բոլորի համար նախատեսված դասասենյակներում):

Օսահմանված կարգով ՆԴ նյութատեխնիկական բազան բավականին ընդգրկուն է, այն իր մեջ բովանդակում է սկսած անհատական կրթության կազմակերպման համար տեխնիկական հարմարանքներից, վերականգնողական կաբինետներից մինչև սանիտարահիգիենիկ և տնտեսակենցաղային սպասարկման միջոցներ: Ի համեմատ ֆիզիկական պայմանների՝ ՆԴ-երի նյութատեխնիակական ռեսուրսներով հագեցվածությունը գնահատվել է որպես հիմնականում ապահովված: Դպրոցներին նյութատեխնիկական բազան համալրելու հարցում աջակցություն են ցուցաբերում ԲՀՄ գնահատման կենտրոնը, որը տրամադրում է մեթոդաբանական ձեռնարկներ, տարբեր միջազգային և հասարակական կազմակերպություններ, որոնք հիմնականում օգնում են դպրոցներին ձեռք բերել ժամանակակից դիդակտիկ նյութեր և պարագաներ:

Բոլոր դպրոցներն ունեն առանձին ռեսուրս սենյակներ: Իհարկե, դրանց մի մասը բավականաչափ վերանորոգված և հագեցած է համապատասխան գույքով և տեխնիկայով, իսկ մի մասը լրացուցիչ համալրման կարիք ունի:

Մանկավարժներն ու բազմամասնագիտական թիմի անդամներն առանձնացնում են նյութատեխնիկական բազայի համալրման երկու ուղղություն:

1. Բազմամասնագիտական թիմի տարբեր անդամների, մասնավորապես՝ հոգեբանի կամ լոգոպեդի համար ցանկալի է ունենալ առանձնասենյակ՝ երեխայի

հետ առանձին աշխատելու նպատակով: Ընդհանուր ռեսուրս սենյակը նման հնարավորություն չի ընձեռնում:

2. Դիդակտիկ նյութերը կարիք ունեն թարմացման: ԿԱՊԿՈՒ երեխաների հետ աշխատանքը հիմնականում տարվում է խաղերի միջոցով, որոնցից երեխաները շատ շուտ ձանձրանում են: Նոր դիդակտիկ նյութերը կօգնեն առավել արդյունավետ կազմակերպել երեխաների հետ անհատական աշխատանքը:

Հայաստանի Հանրապետությունում համընդհանուր ներառական կրթության մարտահրավերները և հնարավոր լուծումները

Հայաստանի Հանրապետությունը համընդհանուր ներառական կրթությունը հռչակում է որպես յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունքի ապահովման երաշխիք: Ներառական կրթության քաղաքականությունը նպատակաուղղված է յուրաքանչյուր երեխայի կրթության մատչելիության, հավասար մասնակցության հնարավորության և որակի ապահովմանը

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող յուրաքանչյուր սովորողի ուսուցման կազմակերպման ռազմավարությունը կառուցվում է հետևյալ ելակետային դրույթների հիմքի վրա.

- կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաները մյուսների հետ հավասար իրավունքներ ունեն հանրակրթական
- հաստատության ընտրության և պարտադիր պետական կրթական ծրագրերի յուրացման հարցերում,
- կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներն իրավունք ունեն օգտվելու հատուկ մանկավարժական, առողջապահական, հոգեբանական, սոցիալական և այլ ծառայություններից՝ անկախ նրանց ընտրած ուսումնական հաստատության տիպից,

- երեխայի համակողմանի բնականոն զարգացման տեսանկյունից նախընտրելի է նրա կրթության կազմակերպումը՝ առանց ընտանիքից և հասարակությունից նրա առանձնացման:

Ներառական կրթությունն այժմ համարվում է յուրաքանչյուր երեխայի կարողությունների լիարժեք բացահայտման միջոցով որակյալ կրթական ծառայությունների մատուցման գործընթացների ամբողջություն: Այս տեսանկյունից յուրաքանչյուր, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխայի որակյալ կրթության ապահովմանը խոչընդոտող գործոններ կարող են լինել իր կարողություններին չհամապատասխանող կրթական ծրագրերը, ուսումնական նյութերը, ուսուցիչների վերաբերմունքը, միջավայրի ֆիզիկական խոչընդոտները: Հետևաբար, յուրաքանչյուր, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխայի որակյալ կրթության ապահովմանն ուղղված քաղաքականությունը պետք է հիմնականում կենտրոնանա միջավայրային խոչընդոտների վերացման և հավասար հնարավորությունների ստեղծման ուղղությամբ: Այստեղ կարևոր է շեշտը դնել այն փաստի վրա, որ խոսելով «միջավայրային» գործոնի մասին, մենք նշում ենք ինչպես սոցիալական այնպես էլ ֆիզիկական բաղադրիչները: Այսինքն, կարևորում ենք միջավայրի ոչ միայն ֆիզիկական սահմանափակումները և խոչընդոտները, այլ նաև սոցիալիզացիան, հասարակության վերաբերմունքը, երեխայի դերը որպես հասարակության անդամ և այդ դերի ընդունումը հասարակության կողմից: Ի վերջո ներառումը սկսվում է ընտանիքում,շարունակվում դպրոցում և կայանում է հասարակության մեջ:

Որոշիչ է այն հարցը, թե ինչպես է առանձին վերցրած աշակերտի համար ապահովվում, որ նա ստանա իր կարողություններին և կարիքներին համապատասխան որակյալ կրթություն: Եթե համակողմանի դիտարկենք աշակերտին, ապա դասարանական աշխատանքների պլանավորման ժամանակ վճռորոշ գործոն է համարվում դասարանում աշակերտի լիարժեք մասնակցությունն ապահովելու համար հնարավորությունների ստեղծումը:

Դպրոցները պետք է ապահովեն բոլոր երեխաների մասնակցությունը՝ օգտագործելով տարբեր աշխատանքային մոտեցումներ, հնարներ և, իհարկե, անհատական մոտեցում: Բոլոր երեխաները պետք է հարգալից վերաբերմունքի արժանանան և ստանան հավասար հնարավորություններ՝ համատեղ սովորելու համար: Բոլոր խնդիրներն իրենց հանգուցալուծումները պետք է ստանան դպրոցի ներսում:

Դպրոցը պետք է պատասխանատվություն կրի՝ ստեղծելու այնպիսի միջավայր, որ յուրաքանչյուր աշակերտ կարողանա սովորել և ստեղծագործել: Դպրոցի միջավայրը պետք է միտված լինի զարգացնելու յուրաքանչյուր աշակերտի ներուժը և կարողությունները: Իսկ այս ամենին հասնելու համար անհրաժեշտ է որպեսզի յուրաքանչյուր դպրոց ունենա ամուր գիտահետազոտական բազա և արհեստավարժ մասնագետների ուղորդում իր գործունեության ընթացքում:

Շատ որոշիչ է, որ դպրոցի անձնակազմն իր աշխատանքում որդեգրի երեք առավելապես կարևոր հասկացություններ, որոնք պետք է վեր դասվեն ուսումնական ծրագրից: Դրանք որակյալ կրթության իրական երեք ցուցանիշներն են՝

- մասնակցություն,
- համագործակցություն և
- հավասարություն:

Դրանք պետք է ուղղորդող սկզբունքներ լինեն կրթության պլանավորման և իրականացման բոլոր գործընթացներում: Երբ բոլոր սովորողների համար ապահովված է լիարժեք մասնակցության և համագործակցության միջավայր, և բոլորն ունեն զարգանալու հավասար հնարավորություններ, ապա կարելի է ասել, որ կրթությունը բարձր որակի է, ուսուցիչները պետք է առավել ակտիվ և համակարգված աշխատեն՝ ներառական կրթության իրականացման նպատակներին հասնելու համար: Ցավոք, այսօր ներառական կրթություն իրականացնող դպրոցներն ունեն մի շարք խնդիրներ, որոնք պահանջում են

հրատապ լուծումներ:

Դրանցից առավել աչքի ընկնողներից են.

- դպրոցի ֆիզիկական միջավայրի հարմարեցումը (ճիշտ անկյան տակ կառուցված թեքահարթակների առկայությունը, դասասենյակների համապատասխան լուսավորվածությունը, խաղասենյակների առկայությունը, ինչպես նաև հարմարեցված սանհանգույցների առկայությունը, ֆիզկուլտուրայի դահլիճի և հանդերձարանների մատչելիությունը, դասարաններում սովորող աշակերտների անհատական կարիքին համապատասխան կահույքը և այլն):
- տեխնիկական սարքավորումների առկայություն դպրոցում (էխո-համակարգեր, հատուկ ծրագրերով հագեցած, աշակերտի կարիքներին հարմարեցված համակարգիչներ և այլն);
- աշակերտների կրթական կարիքներին համապատասխան պարագաներ և դիդակտիկ նյութեր (մեծ տառաչափերով գրքեր և տետրեր, բառապաշարը հարստացնող, ճանաչողությունը զարգացնող խաղեր, համապատասխան գրքեր, ձեռնարկներ)

Անհրաժեշտ է իրականացնել հաշմանդամության ոլորտի վերաբերյալ իրազեկում և լուսաբանում, որոնք հիմնավոր գիտելիքներ կտան հասարակության տարբեր խավերին, քանի որ այսօր դեռ բավականին մեծաքանակ է այն կարծիքը, որ հաշմանդամություն ունեցող երեխան հիվանդ է, կարեկցանքի է արժանի, և կա թերահավատություն և անտեղյակություն ներառական կրթության հնարավորության նկատմամբ:

Եզրակացություն

Այսպիսով՝ անդրադառնալով այսօրվա մեր առջև դրված մարտահրավերներին, ուզում եմ փորձել գտնել համապատասխան մոտեցումներ և տալ հնարավոր լուծումներ, այն է՝

- ճիշտ մոտեցում, ճիշտ լեզու;
- դպրոց-մանկավարժական բուհի հատուկ կրթության ֆակուլտետի հետ կապի ուժեղացում, համատեղ նախագծերի մեկնարկում, գիտական ուժի օգտագործում;
- դպրոցում գիտահետազոտական բազային ապահովում, բարձր որակավորում ունեցող մասնագետների ներառում կարիքի գնահատման տարբեր փուլերում;
- խտրականության վերացում, սոցիալիզացման ապահովում (քանի որ շատ ծնողներ դեմ են իրենց երեխայի կողքին տեսնել հաշմանդամություն ունեցող երեխային), ինչին, օրինակ, հնարավոր է հասնել տարբեր համատեղ միջոցառումների կազմակերպումով և ճիշտ դերաբաշխումով;
- համապատասխան որակավորում ստացած մասնագետների ընդգրկում և նրանց ամենամյա վերապատրաստում;
- մեթոդաբանության ուժեղացում:

Իհարկե, այս ամենով չեն սահմանափակվում ներառական կրթության հիմնախնդիրները, սակայն վերը նշված խնդիրների լուծումը կնպաստի կրթության որակի կտրուկ բարձրացմանը և հիմնաքար կհանդիսանա ՀՀ-ում ներառական կրթության կայացման գործում: